/ Կազմված է 31.03.2013թ. և բաղկացած է 9 թերթից /

Տպագրված է 4 օրինակ Օրինակ 1

Հաստատված է
<< Վերին Բազմաբերդ >> հիմնադրամի
հիմնադիրների 2013 մարտի 31-ի
թիվ 1 որոշմամբ

Գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
<<20>> մայիսի 2013թ.

Հիմնադիրներ

1. Մարտիրոսյան Սարգիս Մուրադի
2. Գասպարյան Գոռ Մեսրոպի
3. Խամոյան Ռադիկ Հայկի

Գրանցման թիվ 222.160.168465
Վկայական 03119184 65
ՀՎՀՀ 05019286
Պետական ռեգիստրի ղեկավար՝

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴ >> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Երևան 2013

1. Ընդհանուր դրույթներ

«Վերին Բազմաբերդ» հիմնադրամը (այսուհետ հիմնադրամ) քաղաքացիների կամավոր գույքային և ոչ գույքային ներդրումների հիման վրա ստեղծված, անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը գործում է ելնելով Վերին Բազմաբերդցիների հիմնախնդիրներից:

1.2 Հիմնադրամը իր գործունեությունը իրականացնում է ՀՀ սահմանադրության, ՀՀ գործող օրենսդրության, միջազգային պայմանագրերի, իրական նորմերի և սույն կանոնադրության համաձայն:Իր գործունեությունը ծավալում է Հայաստանի և արտերկրի հասարակական բարեգործական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների հետ սերտ համագործակցությամբ:

1.3 Հիմնադրամը գործում է կազմակերպության իրավասու ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքով:

1.4 Հիմնադրամը պետական ռեգիստրի կողմից գրանցվելու պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ, գործում է տնտ հաշվարկի և ինքնաֆինանսավորման սկզբունքով, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում (ՀՀ դրամով և տարադրամով, կլոր կնիք, դրոշմոց) և պաշտոնաթղթեր (ձևաթղթեր) :

1.5 Հիմնադրամի հիմնադիրներն են

1. Սարգիս Մարտիրոսյան Մուրադի	ՀՀ քաղաքացի, բնակության վայրը՝ Կոտայքի մարզ գյուղ Պոռշյան, անձնագիր՝ AM0542347, տրված . 046 կողմից 30.11.2011թ
2. Ռադիկ Խաչոյան Հայկի	ՀՀ քաղաքացի, բնակության վայրը՝ ք.Երևան, Մոլդովական 43/1 բն 301, անձնագիր՝ AM0744028, տրված 005 կողմից 25.05.2012թ.
3. Գոռ Գասպարյան Մեսրոբի	ՀՀ քաղաքացի, բնակության վայրը՝ ք. Երևան Վարշավյան 12 տուն անձնագիր՝ AK0439324, տրված 007 կողմից 10.02.2010թ

1.6 Հիմնադրամի անվանումն է

1. Հայերեն լեզվով	<Վերին Բազմաբերդ> հիմնադրամ
2. Ռուսերեն լեզվով	Фонд <Верин Базмаберд>
3. Անգլերեն լեզվով	< Verin Bazmaberd> Fund

1.7 Հիմնադրամի գտնվելու վայր՝

ՀՀ Արագածոտնի մարզ գյուղ Վերին Բազմաբերդ

Փոստային ինդեքս՝ 0513

1.8 Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

1.9 Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադիրների պարտավորությունների, իսկ հիմնադիրը (հիմնադիրները) հիմնադրամի պարտավորությունների համար:

1.10 Հիմնադրամի շահառուներն են՝

ՀՀ Արագածոտնի մարզի Վերին Բազմաբերդ գյուղի բնակիչները, Հայաստանում և արտերկրում ապրող բոլոր Վերին Բազմաբերդցիները:

2. Հիմնադրամի գործունեության նպատակները և տեսակները

2.1 Վերին Բազմաբերդ գյուղի սոցիալ-տնտեսական դրության բարելավման, կրթական, մշակութային, սպորտային օջախների բարեկարգման և դրանց օգտագործման համար համապատասխան պայմանների ստեղծում:

2.2 Տարոն աշխարհի ավանդական նորմերի, ծեսերի ու ծիսակատարությունների պահպանում և տարածում:

2.3 Գյուղի կենցաղում արդիական միջոցների (գազ, էլեկտրականություն, ռադիո և հեռուստահաղորդումներ, ինտերնետային կապ) ներդրում և պատշաճ մակարդակով շահագործման ապահովում:

2.4 Պետական պատկան մարմինների հետ առնչությունների միջոցով գյուղմթերքների արտադրության համար անհրաժեշտ պայմանների (ջուր, պարարտացում և այլն) ստեղծում:

2.5 Գյուղմթերքների տեղում վերամշակման պայմանների ստեղծում և նպաստում արտադրանքի իրացմանը:

2.6 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր նպատակների և խնդիրների իրականացման համար հիմնադրամը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, ստեղծում է տնտեսական ընկերություններ կամ դառնում է դրանց մասնակից:

2.6.1 Հիմնադրամը կարող է անձամբ իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) պտուղ-բանջարեղենի արտադրություն, վերամշակում և իրացում

բ) անասնապահություն, մսամթերքի, կաթնամթերքի վերամշակում և իրացում

գ) մեղվաբուծություն

դ) բարիանքների շահագործում

ե) շինաքարի պատրաստում

զ) շին մոնտաժային աշխատանքներ

3. Հիմնադրամի խնդիրները

3.1. Վերին Բազմաբերդ համայնքի սոցիալ-տնտեսական դրության բարելավման և համայնքի անապահով ընտանիքներին օժանդակելու համար միջոցների հայթայթում և ստեղծում:

3.2 Կանոնադրական խնդիրների իրականացման համար հիմնադրամը՝

- համագործակցում է ՀՀ պետական կառույցների ու մարմինների, ինչպես նաև հասարա-քաղաքական կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ:
- կապեր է հաստատում արտերկրում ապրող Վ. Բազմաբերդցիների, գործող կազմակերպությունների և միությունների հետ:
- իրավունք ունի ստեղծելու ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ:

4. Հիմնադրամի իրավական կարգավիճակը

4.1 Հիմնադրամը իրավաբանական անձ է և ունի հիմնադիրների գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:

4.2 Հիմնադրամը օգտվում է իրավաբանական անձի համար օրենքով սահմանված բոլոր իրավունքներից և կրում է օրենքով սահմանված համապատասխան պարտավորություններ:

4.3 Հիմնադրամը ՀՀ և այլ պետությունների բանկերում կարող է ունենալ հաշվարկային և այլ հաշիվներ (այդ թվում տարադրամով), իր անվամբ դրոշմակնիք, ձևաթուղթ, ինչպես նաև անհատականացման այլ նշաններ:

4.4 Հիմնադրամը իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

4.5 Հիմնադրամը սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների կատարման համար և սույն կանոնադրության համաձայն ու ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն:

5. Հիմնադրամի գույքը

5.1 Հիմնադիրների հիմնադրամին հանձնվող գույքը հիմնադրամի սեփականությունն է:

5.2 Հիմնադրամը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները՝ կանոնադրությամբ սահմանված իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան:

5.3 Հիմնադրամը կարող է որպես սեփականություն ունենալ և ձեռք բերել անշարժ և շարժական գույք, դրամական միջոցներ՝ դրամով և տարադրամով:

5.4 Հիմնադրամի գույքի և ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրներն են՝

ա. հիմնադիրների ներդրումներ

բ. ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերություններ:

գ. դրամական մուտքերը պետական և համանքային բյուջեներից

դ. դրամաշնորհները

ե. հիմնադրամի և իր ստեղծված կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները:

զ. հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կատարմանն ուղղված գործունեությունից (գրանտային, սպորտային, զվարճալի և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում)

է. օրենքով չարգելված այլ միջոցներով:

5.5 Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի, հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված փոխհատուցման ենթակա ծախսերի և հիմնադրամի շահառուներին՝ անհրաժեշտության դեպքում:

6.Հիմնադրամի մարմինները

6.1 Հիմնադրամի մարմիններն են՝ հոգաբարձուների խորհուրդը և տնօրենը:

6.2 Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ խորհուրդ) :

6.3 Խորհուրդի առաջին կազմը կազմավորում է հիմնադիրները: Խորհրդի անդամ կարող է լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ հիմնադիրները:

6.4 Խորհուրդն ունի 27 անդամ:

Հոգաբարձուների խորհուրդը ձևավորում է հիմնադրամի պետական գրանցումից հետո, հիմնադիրների կողմից հրավիրված հանդիպում, ձայների միաձայնությամբ: Նախագահին ընտրում են խորհուրդի անդամներն իրենց կողմից

ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: Հոգաբարձուների խորհրդի նոր կազմի նշանակումը կամ անդամի հեռացումը կատարում են հիմնադիրները՝ ձայների միաձայնությամբ:

6.5 Խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ:

6.6 Խորհրդի անդամները իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է խորհուրդը:

6.7 Խորհրդի աշխատանքների խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել խորհրդի պատվավոր անդամները: Խորհրդի պատվավոր անդամի կոչում շնորհում է խորհուրդը իր կողմից սահմանված դեպքերում և կարգով:

6.8 Խորհրդի անդամները իրավունք ունեն.

ա) առաջարկություններ ներկայացնելու հիմնադրամի խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ,

բ) նախապատրաստելու և խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր,

գ) ստանալ տեղեկություններ հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ,

դ) ստանալ իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

6.9 Խորհրդի անդամները պարտավոր են.

ա) մասնակցել խորհրդի նիստերին

բ) իրենց պարտավորությունների կատարման ընթացքում գործել ելնելով հիմնադրամի շահերից:

6.10 Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը չի սահմանափակվում:

Խորհրդի անդամի լիազորություններն դադարում են.

ա) խորհրդի նախագահին տրված նրա գրավոր դիմումի համաձայն,

բ) նրա կողմից իր պարտականություններն պատշաճ չկատարելու դեպքում՝ խորհրդի մնացած անդամների ապացույցների առկայության դեպքում,

գ) երբ դադարել են խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները,

դ) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում,

ե) մահվան դեպքում:

6.11 Խորհրդի անդամի լիազորության դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով, ոչ ուշ, քան խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին խորհրդի նախագահի ծանուցումն ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում:

6.12 Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում հիմնադրամի նախագահը տեղեկացնում է հիմնադրին և խորհրդին:

6.13 Երբ խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամսյա ժամկետում խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ՀՀ արդարադատության նախարարը երկամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ:

Ժամանակավոր խորհուրդը պարտավոր է, բայց ոչ ավելի օրենքով սահմանված կարգով խորհրդի կազմի համալրման համար:

6.14 Ժամանակավոր խորհուրդը իրավասու է.

ա) իրականացնելու հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ օրենքով խորհրդի վերապահված լիազորություններ,

բ) դիմելու դատարան հիմնադրամը լուծարելու համար,

գ) եթե ժամանակավոր խորհուրդ նշանակվելուց հետո վեցամսյա ժամկետում, խորհուրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան հիմնադրամը լուծարելու համար:

6.15. Խորհուրդը իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին:

Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների պարզ մեծամասնությամբ:

Խորհրդի նիստերն արձանագրվում են: Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է իր կողմից հաստատված կանոնակարգին համապատասխան:

6.16. Խորհրդի նախագահի, տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են խորհրդի կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

6.17. Եթե խորհրդի նիստում քննարկվում է հիմնադրամի խորհրդի որևէ անդամի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, գործընկեր կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկության չի մասնակցում:

6.18. Խորհրդի իրավասության են պատկանում.

ա) հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատում,

բ) հիմնադրամի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանում,

գ) հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումը,

դ) հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,

ե) խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

զ) խորհրդի նախագահի և տնօրենի ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

է) հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, կանոնադրության հաստատման, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը,

ը) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,

թ) հիմնադրամի ֆինանսական գործունեության վերահսկումը

ժ) կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ տնօրենի հաշվետվությունների լսումը,

ի) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,

լ) հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտի) ընտրությունը,

խ) հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը,

ծ) հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակում, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը,

կ) հիմնադրամի կառուցվածքի հաստատումը,

ե) հիմնադրամի հաստիկացուցակի հաստատումը:

6.19 Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

6.20 Խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

6.21 Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները՝ օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով:

Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6.22 Խորհրդի նախագահը.

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կարող է կազմավորել խորհրդի հանձնաժողովներ,

բ) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

դ) խորհրդի քննարկման է ներկայացնում խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ:

6.23 Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, խորհրդի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

6.24 Խորհրդի նիստերը գումարում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստերը կարող են հրավիրել նաև խորհրդի անդամների 1/3-ի պահանջով խորհրդի նախագահի կողմից 30 օրվա ընթացքում: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

Եթե նշված ժամկետում խորհրդի նախագահը չի հրավիրում, ապա կարող են հրավիրել նաև պահանջ ներկայացրած անձինք:

6.25 Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

6.26 Տնօրենի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը:

Տնօրենը կազմակերպում է խորհրդի որոշումների կատարումը: Տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է խորհուրդը: Նրան պարտավորում առաջին անգամ նշանակում կարող է կատարել նաև հիմնադիրները՝ ձայների մեծամասնությամբ:

Տնօրենի իրավունքներն ու պարտականություններն սահմանվում են օրենքով, հիմնադրամի կանոնադրությամբ և նրա հետ նրանց պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիրը ստորագրում է խորհրդի նախագահը կամ խորհրդի լիազորված անձը:

6.28 Տնօրենի բացակայության դեպքում նրա պարտականությունները, խորհրդի որոշմամբ, կատարում է այլ անձ:

6.29 Տնօրենը.

ա) տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքների կնքում հիմնադրամի անունից,

բ) ներկայացնում է հիմնադրամը ՀՀ և օտարերկրյա պետություններում,

գ) գործում է առանց լիազորագրի,

դ) տալիս է լիազորագիր,

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային ,

գ) բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում արտարժույթային) և այլ հաշիվներ,

դ) խորհրդի հաստատման է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիկացուցակը,

ե) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

զ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատողներին, հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին

է) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

6.30. Մնացեալ այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոներ զբաղեցնել միայն խորհրդի համաձայնությամբ:

6.31. Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել կառավարչի հետ կնքված պայմանագիրը օրենքով, հիմնադրամի կանոնադրությամբ և տվյալ պայմանագրով սահմանված կարգով:

Հիմնադրամի մարմինների նիստերն արձանագրվում են օրենքով սահմանված կարգով:

7.Հիմնադրամի գործունեության վերահսկողությունը

7.1. Հիմնադրամի կողմից օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

8. Հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվություն

8.1. Հիմնադրամը 22 օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառման և ներկայացնում ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

8.2. Հիմնադրամի հաշվապահական հաշվառումը կազմակերպվում, վարվում և հաշվապահական հաշվետվությունը կազմվում է 22 օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Հիմնադրամի գործունեության հրապարակումը

9.1. Ծրագրաքանյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ հիմնադրամն օրենքով սահմանված կարգով պարտավոր է հրապարակել.

ա) հաշվետվություն իր գործունեության մասին:

Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի,հիմնադրի, խորհրդի անդամների, կառավարչի և հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանուններն, եթե նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում:

բ) ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե հիմնադրամի արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը:

10. Հիմնադրամի լուծարումը

10.1. Հիմնադրամը կարող էլուծարվել 22 օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.2. Հիմնադրամի լուծարման մասին դատարանի կողմից որոշում ընդունվելուց հետո հիմնադրամի խորհուրդը նանշանակում է լուծարման հանձնաժողով և 22 քաղաքացիական օրենսգրքի ու << Հիմնադրամի մասին>> 22 օրենքի համաձայն սահմանվում է լուծարման կարգը և ժամկետները:

10.3 Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում հիմնադրամի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող հիմնադրամի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

10.4 Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

10.5 Լուծարման հանձնաժողովի իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հայտարարություն է զետեղվում հիմնադրամի լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրատարակման պահից, որը համարվում է հիմնադրամի լուծարման գործընթացի սկիզբ:

10.6 Լուծարման հանձնաժողովը իրականացնում է գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին հիմնադրամի լուծարման մասին:

10.7 Լուծարման ընթացքում հիմնադրամը իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ միայն իր պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

10.8 Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների բավարարման արդյունքների մասին:

10.9 Միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատում է հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը:

10.10 Միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատելուց հետո լուծարման հանձնաժողովը, օրենքով նախատեսված կարգով, հրապարակային սակարգություններով իրականացնում է հիմնադրամի գույքի վաճառքը:

10.11 Լուծարման հանձնաժողովը լուծարվող հիմնադրամի պարտատերերին վճարումներ է կատարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և միջանկյալ լուծարման հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման պահից:

10.12 Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում ուղղվում է պետական բյուջե:

10.13 Հիմնադրամի գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում է դատարանի հաստատմանը:

10.14 Լուծարման հանձնաժողովը հաստատված լուծարման հաշվեկշիռն օրենքով սահմանված մյուս փաստաթղթերի հետ ներկայացնում է իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ հիմնադրամի լուծարման պետական գրանցում կատարելու համար:

10.15 Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից: